



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ՇԱՅՐԱԳՈՒՅՆ-ՊԱՏՐԻԱՐք ԳԵՈՐԳ Զ. Բ
ՍՏՈՐԱԴՐՈՒՄ Է ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ



Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Մրություն Ալեքսին, Համայն Վրաց Պատրիարք-Կարողիկոս Նորին Սույր Օծություն Կալիստրատը և Ամենայն Հայոց Կարողիկոս և Մայրապույն Պատրիարք Նորին Ս. Օծություն Գեորգ Զ. ը

Դ Տ Մ Ո Ւ Մ

Ո-ՈՒՍԱԿԱՆ, ՎՐԱՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՈՒՂՂՎԱԾ ՈՂՋ ԱՇԽԱԲՃԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻՆ

Խաղաղության համար ժողովուրդների մղած բացառիկ լարված պայքարի ներկա շշանում, եր նրանց խաղաղասիրությանը հակադրում են նոր սպառնալիքներ և կործանման միջոցներ, մենք, Սովետական Միության տերիտորիայի վրա գտնվող երեք քրիստոնյա եկեղեցների պետեր՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի, Համայն Վրաց Կարողիկոս-Պատրիարք Կալիստրատ և Ամենայն Հայոց Կարողիկոս և Մայրապույն Պատրիարք Գեորգ Զ., մտահոգված ժողովուրդների հակասագրի տագնապալից վիճակից և առաջնորդվելով Խաղաղության կողմեակիցներին հնարավոր օգնությունը ցույց տալու ցանկությամբ, հավաքվեցինք Թրիլիսի բաղակում իրաւ մոտ, որպեսզի բնարկենք ազակցության այն նոր միջոցառումները, որոնք աներածելու հն քրիստոնեական համագործակցության ոգով և ուժով:

Ամենքին բազ հայտնի է այն համառությունը, որով խաղաղության բշեամիները շարունակում են պատրաստվել պատերազմի: Նոքա աշխատում են իրենց դիտավորությունները վարագուրել ժողովուրդներին «օգնելու լայն ծրագրերով, իսկ չար կամքով, պաշտպանողական դաշինքի վարագուրի տակ,

պատրաստվում պատերազմի: Սակայն նրանց գաղտնիքը բացահայտ դրսեռում է նրանց ուզմական պատրաստությունների լարվածությունը և նրանց ձգությունը՝ իրենց պահեստային մահարեր զենքերով խաղաղ ապրող ժողովուրդներին փարաբելու իրենց կամքը:

Սակայն հակառակ խաղաղության այդ բշնամիների չափերի, որոնք նույնական պատերազմի են նախապատրաստվում, շեշտակի անում և ամրանում է Խաղաղության կողմնակիցների դաշինքը, որը իր մեջ միավորել է բարի կամքի տեր բոլոր մարդկանց՝ առանց բաղամական և կրօնական համոզմութեան խորության: Այդ դաշինքի բարոյական գերադասությունը և նրա հզորությունը՝ հաղթանակի համոզմունք է ներշնչում ժողովուրդներին՝ պատերազմի մռայլ ուժերի վրա: Արդեն շատ բան է արված խաղաղասեր մարդկանց այդ դաշինքը ամրապնդելու ուղղությամբ՝ խաղաղության բշնամիների հարձակողական պլաններին հակադրվելու գործում: Խոկ այս տարվա մարտ ամսում ողջ աշխարհը լսեց Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մրցական կոմիտեի Կոչը՝ արգելելու առոմային զենքը: Այդ կոչում արտահայտվեց մարդկության խիզեր, որը պարտավորեցնում է մեզանից ամեն մեկին բարձրացնելու իր ձայնը ընդդեմ մահվան զենքի: Եվ ո՞քան ավելի է արվում պայքարը խաղաղության համար, ա'յնքան ավելի է ակներև դառնում, որ պատերազմից և երկառակություններից հոգնած ժողովուրդները ծարավի են, վերջապես, միասնական, կենսատու նշմարտության և ձգում են դեպի այդ փրկարար աղբյուրը՝ «Գտանել նմա ի խաղաղութիւն» (Բ բուղը Պետրոսի, Գ, 15):

Տեսնելով նշմարտության համար նորի և ծարավի մարդկանց, կարող ենք արդյուն մենք, մահվանը հաղթահակող Քրիստոսի դավանողներս, որն իր շարշարաններով հաղորդակից դարձեց մարդկանց Աստծու հետ և մարդկանց մեջ փոխադարձ խաղաղության երաշխիքը տվեց, այդ շարժումից մի կողմ մնալ և ոչ մի օգնություն ցոյց շտալով նորան, դրանով, լոելյան, հավանություն տալ մահվան զենքի պատրաստմանը:

Եթե խաղաղության պաշտպանության համար բարձրանում են Քրիստոսից հեռու կանգնած մարդիկ, ապա Քրիստոնեաները, լսու Քրիստոսի պատվիրանի, մշտապես պիտի լինեն խաղաղարաներ:

Այդ պատճառով, Ռուսաստանի Ռուսական Եկեղեցին անմիջապես միացեց իր ձայնը Խաղաղության կողմնակիցների ձայնին, ինչպես այդ արեցին նաև Վրացական Եկեղեցին և ուղղափառ այլ Եկեղեցիները՝ Ռուսիանական, Թուղթարական, Ալբանական, Լեհական: Խաղաղության պաշտպանների դաշնակցությանը միացավ նաև Հայաստանյաց Եկեղեցին: Այդ Եկեղեցիները, խաղաղասեր ժողովուրդներին օգնելու համար, միահամուռ չափերով, անխոնչ կերպով բարձրացնում են իրենց հոգեսոր զենքը՝ կինսատու աղօրեք հանուն խաղաղության ողջ աշխարհում, բարողում են սեր, հոտի բարոյական միասնություն և միավորում պայքարի գործում և Քրիստոնեական նշմարտության հաստատության համար:

Բայց խաղաղության բշնամիները բոլոր միջոցներով մարզվում են այդ նշմարտությանը հակադրվելու համար, սպառնալով նորան ավերածությամբ և մահիկան գերեզոր ուժերով: Ուստի և մենք, երեք Քրիստոնյա Եկեղեցիների պատրիարքներս, բարեհարմար գոտենք ուժեղացնել խաղաղության կողմնակիցների շարժման օգնությունը և այդ առթիվ դիմել կոչով ողջ Քրիստոնյա աշ-



ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊՈՏԲԻԱՐՔ ԱԼԵՔՍԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ է
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ

խարին, որը չի կարող և շպիտի դառնա հենարանը ոչնչացման անմիտ բա-
ղամականության:

Աշխարհի Փրկչի անոնով կոչ ենք անում բոլոր քրիստոնյա հոգվազետ-
ներին և հովիվներին և բոլոր երանց, ովքեր փրկություն են փետուրմ Հիսուս
Քրիստոսի մեջ, միավորել իրենց ուժերը համատեղ պայքարի ընդդեմ համաշ-
խարհային աղետի սպառնալիքի, որպեսզի ենց ինքը՝ մզձավանշը և հալվի՝
«Հալեսցին իրեւ զմո՞ւ առաջի երոյ», և անհետանա կյանքի հորիզոնից:

Զինվել բնդեմ պատերազմի շարիքի՝ պարտն է ամեն մի քրիստոնեի,
որովհետև քրիստոնեությունը մահվան կրոն չէ, այլ կյանքի և փրկության,
որին և ձգուում են բոլոր ծողովուրեները: Նոյն միասնական դաշինքի մեջ
պայքարեցին աշխարհի քշնամիների դեմ, իրենց շարժեռում ունենալով միին-
նալոր քրիստոնյաներ: Աներածեցու է շարունակել և ուժեղացնել այդ պայքա-
րը, որպեսզի բոլոր քրիստոնյաները, առանց դավանանքի խորության, միա-
վորեն իրենց շանքերը այդ սրբազն գործում:

Խաղաղության պայքարում, որպես կյանքի զվարար պայմանը, պիտի
վեր բարձրանալ այն ամենից, ինչ բաժանում է մարդկանց, որովհետև մենք
բոլոր քրիստոնյաներ ենք, Առաջալի խոսերով՝ «Քանզի միով հոգով մենք
ամենենենան ի մի մարմին մկրտեցաք» (Ա. բուզ առ Կորնքացիս, ԺԹ, 13):

Այստեղից բխում է քրիստոնյաների խաղաղության պաշտպանության
գործում միավորվելու բնդիանուր հիմքը:

Ժամանակից մարդկության կարիքները հոգալու խնդրում քրիստոնեու-
թյան պարտքը, ամենից առաջ, կայանում է երանում, որ նա գործուն աջակ-
ցուրյուն ցույց տա խաղաղության մարտիկների ազնիվ որոշումներին՝ արգե-
լելու առոմական զենքը և պատերազմի հանցագործ նանաշել այն կառավարու-
թյանը, որն առաջինը կդրուժարի այդ զենքը:

Անա այդ անհետաձգելի գործի համար և մենք կոչ ենք անում բոլոր քրի-
ստոնյաներին և, առաջին ենքին, եկեղեցիների պատվարժան պետերին:

Նոյն կոչը մենք ուղղում ենք նաև Բողոքական աշխարհին, ի դեմս «Եկե-
ղեցիների համաշխարհային միության»: Միանալով Ստոկիումի խաղաղության
ակտին, «Եկեղեցիների համաշխարհային միություն»ը գործով կարդարացներ
իր պատասխանատվությունը ռազմական բնությունների նկատմամբ:

Մենք նոյն կոչն ուղղում ենք նաև քրիստոնեական աշխարհի Կարոլիկ
մասին այն հույսով, որ նա չի բաժանում պատերազմի հրձիգների աջակից
հանդիսացող հոոմեական կուրիշայի ժաղաքականությունը, և որ նա չի ցանկա-
նում հենարան ծառայել հակաքրիստոնեական բնաշինչ ժաղաքականության
համար:

Թող մեր կոչը հասնի նաև Անգլիկան եկեղեցուն, որը մշտապես մունե-
տիկն է հանդիսացել քրիստոնեական միավորման զաղափարի, ինչպես և բո-
լոր այլ քրիստոնյա միություններին, որոնք ապրում են երկրի վրա:

Միանալով նշված որոշումներին, քրիստոնեական աշխարհը այդ միջոցով
նրանց կտա բարոյական այնպիսի ուժ, որ ի վիճակի կիմքի ներգործել նաև
պատերազմի զաղափարները կրողների վրա:

Առօմական զենքը արգելելու որոշումներին հավանություն տալը՝ պա-
տասխանատու դարձնելով այն պետությանը, որը կհամարձակվի այն գործա-
դրել, ավելի մեծ նշանակություն կտանա՛ եք հոգեռականությունը և քրի-
ստոնեական բոլոր դավանանքի հավատացյալները, հանուն մարդկության փրր-
կության, նոր, ավելի արյունալի պատերազմից, քան հախորդ պատերազմնե-

ըլ, ձեռնարկի նոր միջոցառումների, այն է՝ մտնել խաղաղության պաշտպանության մեջ և ամեն կերպ աշակցել Երանց աշխատանքին, յուրաքանչյուր հովվապես և յուրաքանչյուր բահանա նույն աշխատանքը տանի եկեղեցու քեմից, երավիրելով իր հոտին աղորելու խաղաղության համար ողջ աշխարհի վրա, դեպի խաղաղ ստեղծագործ աշխատանք և օրենելով ամեն մի միջոցառում, որն ուղղված է խաղաղության հաստատմանը և ավետարակական հշմարտությանը կյանքում:

Սյն բոլոր վայրերում, որ հնարավոր է, բող հանդես գա այդ հոգեւոր արի ուժը ո՞չ միայն բանավոր, այլ և գրավոր խոսքի մեջ՝ կոչերի, հորվածեների նկով՝ հանուն խաղաղության պաշտպանության, ինչպես և խաղաղության համար մաշտանցողների բոլոր համաժողովրդական և համաշխարհային միուրյուններում մասնակցելու կոչերի միջոցով:

Իոշ անելով բոլոր Քրիստոնյաներին պայքարելու խաղաղության համար, մենք, աստվածային հախախնամությամբ կարգված Քրիստոնյա եկեղեցիների պետերս, աղորում ենք Տեր Աստծուն, ուսպեսզի ընդհանուր խաղաղության մեծագույն գաղափարը հաղրանակի խառնակության և երկպառակության հանդեպ, և որպեսզի մենք բոլորս, Քրիստոսի հետևորդներս, լինենք ո՞չ միայն խաղաղության համար առաջ կոչ անողներ, այլ և իրական ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵԲԾՐ՝ խաղաղարաները, արժանի լինելով կոչվելու, ըստ խոստման Քրիստոսի՝ «Ուրիշի Ասուուծոյ»:

Թո՞ղ անցնեն խաղաղասեր ժողովուրդների համար տագնապի և անհանգուստության այս ծանր ժամանակները և բո՞ղ բազավորե փստահությունը և անվտանգության հանգստությունը ողջ աշխարհում, հավիտենական խաղաղության մեջ:

Անձնագործարար և վեռապես բոլորս ծառանանք շարի առջև և մեր այս սրբազն և արդար գործում հաղրանակենք նորան հշմարտության ամենահաղի ուժով, հավատքի ուժով, աստվածային անկասկածելի օգնությամբ:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ՝

ԱԼԵՔՍԻ

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ՝


ԿԱՂԻՍՏՐԱՏ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ՝

ԳԵՐԻԳ. Զ.

Թրիխսի, 5 օգոստոսի 1950 թ.





ՀԱՄԱՅՆ ՎՐՈՅ ՊԱՏՐԻԱՌՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱԼԻՍՏՐԱՏԸ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ է
ԽԱՂԱՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ